-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է **գործընթացների, ապրանքների ու ծառայությունների** արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Լուսիա Ֆուդ»

- Սննդի արդյունաբերություն -

Կազմակերպության մասին

Հասցե՝ 2013, Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի պող., 8 շենք
Հիմնական ապրանքներ՝ Կիսաֆաբրիկատներ (հիմնականում մսամթերք)՝ տավարի կոտլետներ, տավարի սթեյք, հավով և սնկով բլիթներ, հավի կոտլետներ, հավի իշլի-քյուֆթա, հավի կիևյան կոտլետներ, կաթնաշոռի բլիթներ, տոլմա խաղողի տերևներով, խինկալի, կուպատի, մսով բլիթներ, խոզի սթեյք, պելմենի և այլն
Աշխատակիցների քանակ՝ 10
Հիմնական շուկաներ՝ Հայաստան
Ստեղծման տարեթիվ՝ 2005

«**Լուսիա Ֆուդ**»-ը սկսել է գործել 2005 թվականից՝ որպես սննդի ծառայություն, երբ կին ձեռներեցը ձեռնամուխ եղավ սոցիալական միջոցառումների համար նոր և մասնագիտացված, հայկական ավանդական սննդի ծառայություններից տարբերվող ծառայություն հիմնելու մարտահրավերին: Տիկին Լուսինե Բարաթյանի կողմից նախագծված նորարարական և բարձրորակ «ֆուրշետային» ծառայությունները կայուն աճեցին պահանջարկի վրա և շահեցին հաճախորդների վստահությունը: 2016 թվականին ընտանեկան ձեռներեցությունը մեծացրել է ներդրումները արժեքային շղթայում՝ սկսելով կիսաֆաբրիկատների արտադրությունը և բացելով վաճառքի կետ: Հաշվի առնելով իր չափերը, ընկերության ակնառու ջանքերը՝ նրան շնորհեցին «Կիսաֆաբրիկատների արտադրության տարվա ընկերություն» ազգային ճանաչումը և «Որակի նշան» մրցանակը 2017 թվականին: Ներկայումս «Լուսիա Ֆուդ»-ը շարունակում է նորարարությունները: Վերջերս թողարկեց նոր սեղանի ձևավորման, էթիկետի և ֆուրշետի կազմակերպման կադրերի պատրաստման ծառայություն: Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ձեռք բերելու դրդապատճառով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) -ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

Հաշվի առնելով իր չափերը, երբ «Լուսիա Ֆուդ»-ը միացավ ՌԱՄԿ ծրագրին, նրա ելակետը (արտադրական տարածքը) շատ փոքր էր: Այնուամենայնիվ, նախագիծը հաջողությամբ ներդրեց ռեսուրսների արդյունավետության սկզբունքները (արտացոլված է էներգիայի սպառման հիմնական կատարողականի ցուցանիշների բարելավման 2021թ. մոնիթորինգում):

- **Էլեկտրաէներգիայի սպառման կրճատում 9.3%-ով մեկ կգ մշակված արտադրանքի համար**
- **Բնական գազի կրճատում 8%-ով մեկ կգ մշակված արտադրանքի համարԹափոնների**
- **Թափոնների կրճատում և արտաքին թափոնների վերաօգտագործում**

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ որոշ տարբերակներ: Այնուհետև ընկերությունը մասնակցել է վերապատրաստման դասընթացներին՝ էներգիայի, ջրի և հումքի ավելի լավ օգտագործման կարողություններ ստեղծելու համար: Ծրագրի փորձագետներն իրականացրել են մասնագիտացված այցեր՝ օգնելու «Լուսիա Ֆուդ»-ին բացահայտելու իր գործունեության և աճի պլաններում ռեսուրսների արդյունավետությունը կիրառելու պրակտիկա և ռազմավարություն: Իրականացվել են հետևյալ հինգ ՌԱՄԱ միջոցառումները:

1. Էներգամատակարարման բարելավված կառավարում: Ընկերությունը փոխել է էլեկտրաէներգիայի սակագինը երկաստիճան հաշվառման համակարգի՝ ավելի լավ տարբերակելու ցերեկային և գիշերային սպառումը:

2. Պատուհանների և ապակեպատ մակերևույթների մեկուսացման բարելավում: Սա հանգեցրեց ջերմափոխանակության և դրանց հետագա էներգիայի կորստի կրճատման ներքին և արտաքին միջավայրում: Այնուհետև նոր օբյեկտները ծածկվեցին ջերմամեկուսիչ թաղանթներով, որոնք նվազեցրին էներգիայի սպառումը 10-15%-ով:

3. Տաք ջրի և այլ ջեռուցման համար բնական գազի կաթսայի տեղադրում: Իր տարածքն ընդլայնելիս ընկերությունը նախընտրել է բնական գազով ջեռուցումը էլեկտրականի փոխարեն:

4. Թափոնների կենսազանգվածի վերաօգտագործումը՝ որպես թարմ կեր անասունների համար: Բացի այդ, ընկերությունը փնտրում է համագործակցություն այլ գործընկերների հետ՝ կոմպոստ վերամշակման համար (այստեղ սարքավորումների մեջ ներդրումներ են անհրաժեշտ):

5. Հին, մաշված, հիմնական արտադրական սարքավորումների վերանորոգում: Ընկերությունն ընկղմվել է վերանորոգման գործընթացի մեջ: Էներգիա սպառող հին տեխնիկան, օրինակ՝ սառնարանները, փոխարինվել են նորերով՝ արտադրանքն ավելի արդյունավետ պատրաստելու և էներգիայի սպառումը նվազեցնելու համար:

Պահպանելով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն իրականացրել է բացահայտված ՌԱՄԱ միջոցառումներից հինգը: Այնուամենայնիվ, ակնկալվող մնացած միջոցառումները դեռևս ընթացքի մեջ են: Քանի որ ծրագրի մեկնարկի պահին հաստատությունը նոր էր սկսել իր գործունեությունը, այդ ելակետի համար ուղղակի ծախսերի խնայողության գնահատականները մնացել են փոքր: Այնուամենայնիվ, «Լուսիա Ֆուդ»-ը հավատարիմ է ՌԱՄԱ-ին, քանի որ այս միջոցառումները կկանխեն գործառնական ծախսերի ավելացումը և ավելի շատ էներգիա պահանջող արտադրությունը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

էներգիայի և թափոնների ծախսերի հնարավոր խնայողություն՝ 945 ԱՄՆ դոլար/տարի

Հնարավոր ներդրումը՝ 6,180 ԱՄՆ դոլար

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էներգիայի հնարավոր կրճատում՝ 9,200 կՎտժ/տարի

Թափոնների հնարավոր կրճատում՝ 2.6 տոննա/տարի

Այլ հնարավորություններ

Մոնիթորինգի ժամանակ «Լուսիա Ֆուդ»-ն արդեն վերանորոգում էր իր արտադրական տարածքը, ուստի ՌԱՄԱ միջոցառումները սկսեց ներառել իր ընդլայնման ծրագրերում: Այս գործընթացում այն ակնկալում է բնապահպանական օգուտների հասնել ռեսուրսների և թափոնների նվազեցման, չեզոքացման, վերամշակման և կառավարման սկզբունքների կիրառմամբ: Ի թիվս այլ քայլերի, արտադրամասի հիմնովին վերանորոգումից հետո դիտարկվում են ՌԱՄԱ-ի հետևյալ տարբերակները (նշված ՌԱՄԱ ծրագրի ընթացքում)՝ շենքի տանիքում փոքր ներցանցային ՖՎ համակարգի տեղադրում՝ տարեկան էլեկտրաէներգիայի սպառման մոտավորապես 40%-ի փոխարինման համար, և կենսազանգվածի թափոններից պարարտանյութի արտադրություն: Որպես իր ծառայությունների հավելյալ արժեք՝ «Լուսիա Ֆուդ»-ը նախատեսում է նաև բոլոր անհրաժեշտ ջանքերը ներդնել էկոլոգիապես մաքուր դառնալու համար: Ավելի առաջադեմ տեխնոլոգիական գործընթացների իրականացումը, բարելավված սարքավորումները, նոր պրակտիկայի ներդրումը՝ ժամանակին սպասարկումը և թափոնների վերականգնումը, վերականգնվող էներգիայի հետագա օգտագործումը, այս ամենը հանգեցրել է ընկերության մտածելակերպի դրական փոփոխության: Վերջինս կօգտագործվի իր շուկայականությունն ու մրցունակությունը բարելավելու, նոր արտադրական գծեր բացելու և ավելի մեծ քաղաքներում և ամբողջ երկրում նոր շուկաներ մուտք գործելու համար:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «Լուսիա Ֆուդ»-ը միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ին մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք www.eu4environment.org:

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չերնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
էլ: t.chernyavskaya@unido.org

Կովկասի ՏԲԿ
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148